

**ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԵՐՇ. Տ. ՄԻՔԱՅԷԼ ԵՊՍ. ԱՋԱՊԱՅԵԱՆ
Կ'ԱՅՑԵԼԷ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄ**

Այսու ուրախութեամբ կը հաղորդենք, թէ Հայաստանի Շիրակի թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Միքայէլ Եպս. Աջապահեան հիւրաբար կ'այցելէ Արեւմտեան թեմ:

Սրբազան Հայրը Ուրբաթ, Յուլիս 16ին, 2010 այցելեց Առաջնորդարան եւ հանդիպում ունեցաւ թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի հետ եւ տեղեկութիւններ հաղորդեց Շիրակի թեմի հոգեւոր կեանքի եւ երիտասարդաց գործունէութիւններու մասին:

Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Համալիրէն ներս շրջագայած ըլլալով, իր հոգեկան գոհունակութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր եւ շնորհաւորեց զինք եւ ամբողջ Արեւմտեան թեմը, որ այսպիսի հրաշալի Մայր Եկեղեցի մը կառուցել տուած էին, որուն Օծումը պիտի կատարուէր Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ:

Առաջնորդ Սրբազան Հօր հրաւերով, Գերշ. Տ. Միքայէլ Եպս. Աջապահեան պիտի պատարագէ եւ քարոզէ թեմիս հետեւեալ եկեղեցիներուն մէջ.-

- | | |
|---------|---|
| Յուլիս | 18ին Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ
մէջ պիտի քարոզ: |
| Յուլիս | 25ին Պըրպէնքի Հայց. Եկեղեցւոյ մէջ՝
Առաջնորդարան պիտի քարոզ: |
| Օգոստոս | 1ին Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ
մէջ պիտի քարոզ: |
| Օգոստոս | 8ին Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ
Հայց. Եկեղեցւոյ մէջ (ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈԶ): |

Հաւատացեալներ սիրով կը հրաւիրուին Եկեղեցի, միասնաբար աղօթելու եւ լսելու հիւր հոգեւորականին պատգամը: